

ՆԱԽԱՐԱՐԸ ՉԻ ԲԱՑԱՏՐԵՐ ԻՐ ԼԱԻՎՏԵՍՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ծն. Հայաստանի արտաքին գործոց նախարար՝ Էտուարտ Նալպանտեանի «Արմենիա» գործակալության հետ ունեցած հարցազրույցը ընթերցողներուն մօտ այն տպավորութիւնը կը ստեղծէ, որ Հայաստանն է նախաձեռնողը, իր աշխուժ արտաքին քաղաքականութեան շնորհիւ՝ հայ-թրքական յարաբերութեան եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման ուղղութեամբ:

Սակայն, ընթերցելէ ետք հարցազրույցը, ընթերցողը՝ այդպէս ալ պիտի չհասկնայ Հայաստանի ձեռքբերումներն ու առաւելութիւնները: Նալպանտեան կը խօսի հայ-թրքական յարաբերութիւններու համատեղ յայտարարութեան առաւելութիւններուն մասին, սակայն չի թուր արդ առաւելութիւնները...: Ան կը խօսի ճանապարհային քարտէսին մասին, սակայն չի բացատրեր, թէ ինչո՞ւ համար է այդ «ճանապարհ»-ը եւ ո՞վ որոշեց այդ «ճանապարհ»-ը, ինչպիսի՞ բովանդակութիւն, խորք, ու ձեւ ունի ա: Չի բացատրեր, թէ ինչ պիտի ըլլայ հայ-թրքական յայտարարութեան նախաքայլը, ո՞վ պիտի առնէ այդ նախաքայլը:

Հայաստանի արտաքին գործոց նախարարը, հարցազրույցի ընթացքին շատ բան կը խօսի, բացի հիմնականէ: Ան կ'ըսէ, թէ պէտք է հաւատարմ մեր սեփական ուժերուն... (ո՞ր ուժերուն մասին է խօսքը): Ընթերցողը արդարօրէն պիտի հարցնէ, կ'արժէ՞ այս հարցազրույցը ընդհանրապէս ունենալ «Արմենիա»-էն: Հետաքրքիր է իմանալ, թէ ո՞վ տեսած է այդ «քարտէս»-ը, ո՞ր մշակուած է այդ «ճանապարհ»-ը եւ որո՞նք հաշուին...: Թուրքիոյ վարչապետը կը շարունակէ յայտարարել, թէ քանի Ղարաբաղի հարցը չի լուծուիր՝ սահմանը Հայաստանի հետ պիտի մնայ փակ, եւ որեւէ պայմանագիր չ'ստորագրուիր: Նախագահ Ապտուլլա Կիլ կը յայտարարէ, թէ Թուրքիա՝ Ատրպէյճանի շահերուն վնասող քայլերու չի դիմեր, իսկ մեր յարգարժան արտաքին գործոց նախարարը կը փորձէ մեզ համոզել առաւելութիւններու մասին եւ թէ՛ Թուրքիա հրաժարած է Ղարաբաղի հարցը նախապայման ներկայացնելէ: Հայաստանի իշխանութիւնները կը յայտարարեն, թէ հայ-թրքական յարաբերութիւններուն եւ համաձայնագրիին մէջ

նախապայմաններ չկան: Հետաքրքրական է, երբ նախապայմաններ չկան, ապա՞ ի՞նչ կ'ընենք: Չորս գոյացած է համաձայնութիւնը եւ ինչո՞ւ Հայաստանի իշխանութիւնները չեն յայտարարեր «առանց նախապայմանի» համաձայնուած կէտերը:

Մենք այն համոզումը ունինք, որ առանց Թուրքիոյ նախապայմանները իրականանալու հայ-թրքական սահմանին բացումը հայրենի իշխանութիւններուն համար պիտի մնայ անապահով երազ:

«Արարատ» իր ընթերցողներուն կը ներկայացնէ 13 հոկտեմբեր 1921-ին «եղբայրական» մթնոլորտի ու պայմաններու տակ կնքուած տիրահռչակ Կարսի համաձայնագիրը: Այս համաձայնագիրն է, որ մինչեւ օրս կարգաւորած է հայ-թրքական սահմանը: Կ'արժէ արձանագրել, որ Կարսի համաձայնագիրին ամբողջական տարբերակը գոյութիւն չունի, ոչ ալ՝ ամբողջական թարգմանութիւն:

Կողքի սիւնակին մէջ մեր ընթերցողներուն կը ներկայացնենք Կարսի համաձայնագիրը:

ԸՍՏ ԷՏՈՒԱՐՏ ՆԱԴՊԱՆՏԵԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉԳՏՈՒՄ Է ԼԻԱՎԱՏԱՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՀԵՏ ԱՌԱՆՑ ՈՐԵՒԷ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ»

- Հայաստանի արտաքին գործերու նախարար Էտուարտ Նալպանտեան երկուշաբթի, Ապրիլ 27-ին հարցազրույց տուած է «Արմենիա» լրատուական գործակալութեան: Հարցազրույցը վարած է գործակալութեան տնօրէն Հրայր Չօրեան: Հայ-թրքական յարաբերութիւններու թղթածրարը կարելի ամբողջականութեամբ ընթերցողներուն փոխանցելու շահագրգռութեամբ, ստորեւ կը ներկայացնենք սոյն հարցազրույցը:

Պարոն նախարար, նախ կ'ուզէի շնորհակալութիւն յայտնել հարցազրույց տալու մեր խընդրանքն ընդունելու համար: Ձեր ղեկավարութեամբ բաւական ակտիւացել է Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը:

ԷՏՈՒԱՐՏ ՆԱԴՊԱՆՏԵԱՆ.- Ներդրութիւն, պարոն Չօրեան, որ ընդհատում եմ Ձեզ, որովհետեւ կ'ուզէի ընդգծել, որ մեր արտաքին քաղաքականութիւնը ղեկավարում է հանրապետութեան նախագահը, իսկ ես ղեկավարում եմ արտաքին գործերի նախարարութիւնը, որի գլխավոր առաքելութիւնն է իրականացնել այն խնդիրները, որոնք մեր առջեւ դնում է հանրապետութեան նախագահը:

ՀՐԱՅՐ ՉՕՐԵԱՆ.- Լինելով գործող նախագահ տարբեր միջազգային կազմակերպութիւններում, Դուք բազմաթիւ հիւրեր եք ընդունում, տարբեր այցեր եք կատարում: Յայտնի է անուանի դիւանագետներին մէկ արտայայտութիւնը, որ թէ մի երկրի արտգործնախարարը այցեր չի ունենում, ուրեմն այդ երկիրն արտաքին քաղաքականութիւն չունի: Լայն է Ձեր այցերի աշխարհագրութիւնը, որտեղ ներառուել է անգամ Թուրքիան, որը, կարծես թէ, նորութիւն է մեզ համար:

ԷՏՈՒԱՐՏ ՆԱԴՊԱՆՏԵԱՆ.- Չեմ կարծում դա նորութիւն է, չեմ կարծում դա նորոյթ է, որովհետեւ տարիներ շարունակ Հայաստանի անկախութիւնից յետոյ միշտ էլ եղել են շփումներ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ, եղել են նաեւ բարձրաստիճան պաշտօններին բազմաթիւ այցելութիւններ, եւ Հայաստանը միշտ էլ ձգտել է յարաբերութիւնները կարգաւորել Թուրքիայի հետ առանց նախապայմանների:

ՀՐԱՅՐ ՉՕՐԵԱՆ.- Ինչպէ՞ս կը գնահատեք հայ-թուրքական յարաբերութիւնների ներկայ փուլը, յատկապէս հաշուի առնելով այն կարծիքները, որ երբեք մեր յարաբերութիւններն այսպէս հեռու չէին գնացել:

ԷՏՈՒԱՐՏ ՆԱԴՊԱՆՏԵԱՆ.- Ես կ'ասեի այդքան չէին մօտեցել երբեւէ, իսկապէս, որովհետեւ Հայաստանի Հանրապետութեան նախագահի նախաձեռնութեամբ, երբ Թուրքիայի նախագահ Կիլը հրահրուեց այցելելու Հայաստան՝ միասին դիտելու ֆուլբայթի խաղը, դրանով որակական նոր փուլ մեկնարկեց յարաբերութիւնների կարգաւորման գործընթացում: Շատ կարելիոր հանդիպումներ կայացան Հայաստանի եւ Թուրքիայի նախագահների միջեւ, նաեւ կարելիոր հանդիպում կայացան Տաւոսում մեր երկրի նախագահի եւ Թուրքիայի վարչապետի միջեւ, բազմաթիւ, մօտ տալը հանդիպումներ են կայացել նաեւ արտաքին գործերի նախարարների մակարդակով: Եւ այսօր մենք եկանք այն յայտարարութեանը, որը արուեց ամիս 22-ին, որով նշում է առաջընթացի մասին բանակցութիւնների ընթացքում:

ՀՐԱՅՐ ՉՕՐԵԱՆ.- Կան կարծիքներ, որ այդ յայտարարութիւնն անակնկալ էր, նոյնիսկ ինչու է կարծիքներ խաբուած լինելու մասին:

ԷՏՈՒԱՐՏ ՆԱԴՊԱՆՏԵԱՆ.- Բայց ինչ անակնկալի կամ խաբուածութեան մասին կարող է խօսք լինել: Գիտեք, ամիսներ շարունակ հանրապետութեան նախագահը, արտաքին գործերի նախարարը, բազմաթիւ յայտարարել են, որ Հայաստանը ձգտում է լիակատար յարաբերութիւններ հաստատել Թուրքիայի հետ, կարգաւորել յարաբերութիւնները Թուրքիայի հետ առանց որեւէ նախապայմանների, եւ այսօր այդ յայտարարութեամբ, մենք են նշում ենք, որ գնում ենք յարաբերութիւնների կարգաւորմանը, սահմանների բացմանը առանց որեւէ նախապայմանների: Այս պարագայում, ինչ

խաբուածութեան կամ ինչ նորութեան մասին է խօսքը:

ՀՐԱՅՐ ՉՕՐԵԱՆ.- Դուք ասում եք, որ նախապայմաններ չկան, բայց Թուրքիայից տարբեր այլ մեկնաբանութիւններ, կարծիքներ են իրնչում, իսկ Հայաստանում կարծիքներ կան, որ մենք զիջումներ ենք գնում:

ԷՏՈՒԱՐՏ ՆԱԴՊԱՆՏԵԱՆ.- Գիտեք, այնպիսի տպավորութիւն է ստեղծում, որ մենք չենք հաւատում ինքներս մեզ, թեքահաւատութիւն ունենք մեր ուժերի նկատմամբ, մեր հնարաւորութիւնների նկատմամբ, չենք հաւատում, որ Հայաստանը, իսկապէս, կարող է ինչ-որ առաջընթաց արձանագրել, միշտ մտածում ենք, որ եթէ ինչ-որ մի լաւ բանի ենք հասել, ուրեմն տակը ինչ-որ մի վնաս է թաքնուած: Այսինքն, եթէ ծանկ ենք բարձրացել, անպայման պէտք է ընկնենք քարին: Կամ մտածում ենք, որ մեզ անպայման պէտք է խաբեն: Ո՞վ է խաբելու. եթէ Թուրքիան է մեզ խաբելու, առաջին հերթին Թուրքիան խաբելու է ինքն իրեն, խաբելու է միջազգային հանրութեանը, խաբելու է Միացեալ Նահանգներին, Ռուսաստանին, Եւրոմիութեանը: Մեր ձգտումն անկեղծ է եւ հաստատական: Հայաստանը ձգտում է լիակատար յարաբերութիւններ հաստատել Թուրքիայի հետ առանց որեւէ նախապայմանների: Եւ կարծում եմ, մեր մօտ այն տպավորութիւնը կայ, որ Թուրքիայի ղեկավարութիւնն էլ ունի ցանկութիւն գնալ առաջ եւ յարաբերութիւնները կարգաւորել երկու երկրների միջեւ:

ՀՐԱՅՐ ՉՕՐԵԱՆ.- Յայտարարութիւնը հրապարակուեց Ապրիլի 22-ին՝ Մեծ Եղեռնի տարեկիցի նախօրէին, ինչը նոյնպէս տարբեր մեկնաբանութիւնների առիթ տուեց: Ինչպէ՞ս դա կը մեկնաբանեք:

ԷՏՈՒԱՐՏ ՆԱԴՊԱՆՏԵԱՆ.- Երբ որ ասում ենք առանց նախապայմանների ենք կարգաւորում յարաբերութիւնները, մենք նկատի ունենք, որ որեւէ նախապայման չկայ Ղարաբաղի հարցի լուծման հետ կապուած եւ որեւէ նախապայման չկայ ցեղասպանութեան ճանաչման հետ: Եւ յարաբերութիւնների կարգաւորումը որեւէ կերպ հարցականի տակ չի դնում ցեղասպանութեան իրողութիւնը, եւ դրա մասին բազմաթիւ ասել է հանրապետութեան նախագահը, արտաքին գործերի նախարարը: Գիտեք, ես յուսով եմ, որ երբ որ մենք բարելաւենք, կարգաւորենք մեր յարաբերութիւնները, ապա ոչ միայն մեր երկրի՝ Հայաստանի ղեկավարները կը գան Ծիծեռնակաբերդ ծաղիկներ դնելու, այլեւ Հայաստանի ղեկավարներին կը միանան Թուրքիայի ղեկավարները: Ինչու՞՞ մենք չենք կարող անել այն, ինչ-որ արեցին Շարլ տը Կոլը եւ Անտեանտերը: Ես վստահ եմ, որ կը գայ այդպիսի օր, եւ այդ քայլը կ'առնեն նաեւ Հայաստանի եւ Թուրքիայի ղեկավարները: Եւ ե՞րբ յարմար կը լինի այդպիսի քայլ անել, եթէ այդ օրուն մենք հասնենք, միգուցէ, հենց Ապրիլի՞: Դրա մէջ, կարծեմ, նաեւ ինչ-որ խորհրդանշի կարող է լինել: Եւ ամիս 22-ին այդ յայտարարութիւնն անելու մէջ էլ, միգուցէ, այդ խորհուրդը կայ:

ՀՐԱՅՐ ՉՕՐԵԱՆ.- Այնուամենայնիւ, ինչո՞ւ Ապրիլի 22-ի գիշերը:

ԷՏՈՒԱՐՏ ՆԱԴՊԱՆՏԵԱՆ.- Սկստի ունե՞ք՝ գիշերը: Գիտեք, դիւանագիտութեան մէջ չկայ ո՞չ ցերեկ, ո՞չ գիշեր, ո՞չ առաւօտ, ո՞չ երեկոյ հասկացողութիւնները: Ընդհանրապէս, բանակցութիւններն ունեն իրենց սրամաբանութիւնը, որոնք բերում են որոշ հանկարծանքի, համապատասխան առաջընթացների, եւ որոնց մասին իրագրելու է հանրութիւնը: Ես յիշում եմ Ֆրանսիայում, երբ ճանաչում էր ցեղասպանութիւնը, երբ Մեանտում ընդունում էր ցեղասպանութեան ճանաչման օրէնքը, այդ քննարկումները գնում էին կեպիշերին, եւ որոշումն ընդունուեց առաւօտեան ժամը 4:00-ին: Եւ ոչ մէկը ոչ գարմացաւ, ոչ էլ հարցրեց. «Ինչո՞ւ քննարկումները գիշերին էին, եւ առաւօտեան ընդունուեց այդ որոշումը»: (Նախարարի այս բացատրութիւնը այնքան պարզունակ է, որ իսկապէս կը վիրաւորէ մեզ:

(Շար.ը տեսնել՝ էջ 3)

ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՍՀ-Ի, ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՍՍՀ-Ի ՈՒ ՎՐԱՏԱԿԱՆ ՍՍՀ-Ի ՄԻ ԿՈՐՄԻՏԵ ԵՒ ՄԻՐՍ ԿՈՐՄԻՏԻ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՄԵՋԵՐ, ՌՍՖՍՀ-Ի ՍՄՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԸ ԿԱՐՍՈՒՄ ԿՆՔՈՒՄԸ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

13 հոկտեմբեր, 1921թ., թարգմանութիւն ռուսերէնից

Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան, Ատրպէյճանի Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան եւ Վրաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան կառավարութիւնները մէկ կողմից եւ Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի կառավարութիւնը միւս կողմից, ընդունելով ազգերի եղբայրութեան սկզբունքները եւ ճանաչելով ժողովուրդների ինքնորոշման իրաւունքը, առաջնորդուելով նրանց միջեւ մշտական ջերմ փոխ յարաբերութիւններ եւ փոխադարձ շահերի վրայ հիմնուած անվախտ, անկեղծ բարեկամութիւն հաստատելու ցանկութեամբ՝ որոշեցին սկսել բանակցութիւններ Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Սովետական Հանրապետութեան մասնակցութեամբ...

ՅՕՐՈՒՄ 1.
Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարութիւնը եւ Հայաստանի, Վրաստանի, Ատրպէյճանի Սովետական Սոցիալիստական հանրապետութիւնների կառավարութիւններն անվախտ եւ ուժը կորցրած են համարում այն պայմանագրերը, որոնք կնքուել են ներկայումս պայմանաւորող կողմերի տարածքի մէջ մտնող տարածքում առաջնորդում իրենց սովերեն իրաւունքները իրականացրած պետութիւնների միջեւ, եւ որոնք վերաբերում են վերոյիշեալ տարածքներին, անվախտ եւ ուժը կորցրած են համարում նաեւ երրորդ տերութիւնների կողմից կնքուած եւ Անդրկովկասի հանրապետութիւնների վերաբերող պայմանագրերը: Համարում է որոշում, որ սոյն յօդուածը չի վերաբերում 1921 (1337) թ. Մարտի 16-ին Մոսկուայում կնքուած ռուս-թրքական պայմանագրին:

ՅՕՐՈՒՄ 2.
Պայմանաւորող կողմերը համաձայնում են չճանչնալ ոչ մի հաշտութեան պայմանագիր կամ միջազգային որեւէ այլ ակտ, եթէ կողմերից մէկին ուժով են հարկադրում այն ընդունել: Այդ պատճառով Հայաստանի, Ատրպէյճանի եւ Վրաստանի ՍՍՀ-ների կառավարութիւնները համաձայնում են չճանաչել որեւէ միջազգային ակտ, որը վերաբերում է Թուրքիային եւ ճանաչուած չէ Թուրքիայի ազգային կառավարութեան կողմից, որը ներկայումս ներկայացրած է նրա Ազգային Մեծ Ժողովով:

(Սոյն Պայմանագրում Թուրքիա հասկացութեան տակ հասկացում են այն տարածքները, որոնք մտնում են 1920 թ. (1336թ.) Յունուարի 28-ի թուրքական Ազգային ուխտի մէջ, որը Կ. Պոլսում մշակել եւ հռչակել է Գեպուտատների օսմանեան պալատը եւ հաղորդել մամուլին ու բոլոր պետութիւններին):

Իր կողմից Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի կառավարութիւնը համաձայնում է չճանաչել որեւէ միջազգային ակտ, որը վերաբերում է Հայաստանին, Ատրպէյճանին ու Վրաստանին եւ ճանաչուած չէ այդ հանրապետութիւնների համապատասխան կառավարութիւնների կողմից, որոնք ներկայումս ներկայացրած են Հայաստանի, Ատրպէյճանի եւ Վրաստանի Սովետական կառավարութիւններով:

ՅՕՐՈՒՄ 3.
Հայաստանի, Ատրպէյճանի եւ Վրաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւնների կառավարութիւնները, ընդունելով, որ կապիտալիզմների ռեժիմը համատեղելի չէ որեւէ երկրի ազատ ազգային զարգացման, ինչպէս նաեւ նրա սովերեն իրաւունքների լիակատար իրագործման հետ, գտնում են, որ այդ ռեժիմին որեւէ ձեւով առնչուող բոլոր ֆունկցիաներն ու իրաւունքները կորցրել են իրենց ուժը եւ համարում են վերացում:

ՅՕՐՈՒՄ 4.
Թուրքիայի հիւսնարելեւեան սահմանը (ըստ ռուսական գլխաւոր շտաբի 1/210000 մասշտապով քարտէզի, 1 տիւյնը 5 վերստ է) որոշում է գիծով, որն սկսւում է Մեւ Ծովի ափին գտնուող Սարալ գիւղի մօտ, անցնում Խեղիս-միս սարով,

Կաննի-դաղ լեռան ջրբաժանով, ապա Արտահանի եւ Կարսի սանճաքների միջև ինչպիսիք հիւսնային վարչական սահմաններով, Արփա-չայ, Արաքս գետի ջրհոսի հունով մինչեւ Ստորին Կարա-սու (Սահմանների մանրամասն երկարագրութիւնը եւ դրան առնչուող հարցերը սահմանուած են 1-ին եւ 2-րդ յաւելումներում եւ պայմանաւորող երկու կողմերի ստորագրած կից քարտէզում: Պայմանագրի տեքստի եւ քարտէզի տարբերութեան դէպքում վճարական նշանակութիւնը տրուած է տեքստին):

Բնութեան մէջ պետական սահմանի մանրամասն որոշումը եւ անցկացումը, ինչպէս նաեւ սահմանային նշանների տեղադրումը իրականացնում է սահմանային խառը յանձնաժողովը պայմանաւորող կողմերի հաւասար թիւով անդամներով եւ ՌՍՖՍՀ-ի ներկայացուցչի մասնակցութեամբ:

ՅՕՐՈՒՄ 5.
Թուրքիայի կառավարութիւնը եւ Հայաստանի ու Ատրպէյճանի Սովետական կառավարութիւնները համաձայնում են, որ Նախիջեւանի մարզը սոյն պայմանագրի 3-րդ յաւելումում նշուած սահմաններով ձեւաւորում է ինքնավար տարածք Ատրպէյճանի խնամակալութեան ներքոյ:

ՅՕՐՈՒՄ 10.
Պայմանագրող կողմերը պարտաւորում են թոյլ չտալ իրենց տարածքներում այնպիսի կազմակերպութիւնների կամ խմբերի ստեղծում կամ ներկայութիւն, որոնք ունեն միւս երկրի կամ նրա տարածքի մի մասում կառավարութեան դերն ստանձնելու յարակնութիւն, հաւասարապէս նաեւ այնպիսի խմբերի ներկայութիւն, որոնց նպատակն է պայքարել պայմանաւորող միւս կողմի դէմ:

Համարում է որոշում, որ սոյն յօդուածում յիշատակուած թուրքական տարաբնու տակ հասկացում է այն տարածքը, որը գտնում է Ազգային Մեծ Ժողովի կառավարութեան զինուորական եւ քաղաքացիական անմիջական կառավարման ներքոյ:

ՅՕՐՈՒՄ 11.
Պայմանաւորող երկու կողմերի այն քաղաքացիների վրայ, որոնք գտնում են միւս կողմի տարածքում, կը տարածուեն հիւրընկալող երկրի օրէնքներից բխող բոլոր իրաւունքներն ու պարտականութիւնները, բացառութեամբ ազգային պաշտպանութեան պարտականութիւնների, որոնցից նրանք կ'ազատուեն:

Պայմանաւորող կողմերի քաղաքացիների ընտանեկան իրաւունքին, ժառանգութեան իրաւունքին եւ իրաւունակութեանը վերաբերող հարցերը նոյնպէս բացառում են սոյն յօդուածի որոշումներից: Գրանք կ'որոշուեն յատուկ համաձայնագրով:

ՅՕՐՈՒՄ 12.
Պայմանաւորող կողմերը իրաքանչիւր տարածքում գտնուող միւս կողմի քաղաքացիների նկատմամբ կը կիրառեն առաւելագոյն բարենպաստման ռեժիմը:

ՅՕՐՈՒՄ 13.
Մինչեւ 1918 թուականը Ռուսաստանի մի մասը կազմած եւ այժմ Թուրքիայի սովերենութեան տակ գտնուող տարածքների իւրաքանչիւր բնակիչ եթէ ցանկացաւ, ունի թուրքական քաղաքացիութիւնից դուրս գալու, Թուրքիայից ազատօրէն հեռանալու եւ սեփական իրերը, գոյքը կամ դրանց արժէքը իր հետ վերցնելու իրաւունք:

ՅՕՐՈՒՄ 15.
Պայմանաւորող կողմերից իւրաքանչիւրը պարտաւորում է սոյն Պայմանագ